# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԱՏԱ ՍՊԸ-ն ԵԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-22/27 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | |
|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 14 | ԱՏԱ ՍՊԸ | ԱՏԱ ՍՊԸ | ԱՏԱ ՍՊԸ | Կրծքանշանի արտագծած շրջանագծի տրամագիծը 35 մմ, արտադրվում է դրոշման եղանակով, առնվազն 75% պղնձի պարունակությամբ համաձուլվածքից: Կրծքանշանն իրենից ներկայացնում է ութաթև պատկեր, որը խորհրդանշում է երկրի չորս կողմերը: Կրծքանշանը բաղկացած է կենտրոնաձիգ թևերից կազմված խաչից, նրա անկյուններում 5 մմ փրկարարի պաշտպանական ուժը բնութագրող սրերից, որոնց հատման կենտոնական մասում շրջանագծի մեջ հավերժության 12 թերթիկները և փրկարարի ոսկեգույն պարանը հիշեցնող բաժանարար վահանաձև գծերը հիշեցնող պատկերն է, կենտրոնական մասը պատված է էմալով: Խաչի թևերի վրա հայերեն և անգլերեն տառերով նշված են «ՓՐԿԱՐԱՐ», «ՀԱՅԱՍՏԱՆ», «RESCUER» և «ARMENIA» բառերը: Կրծքանշանի |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | դարձերեսին հորիզոնական մեկ տողով գրված է «ՀՀ ԱԻՆ MES RA» բառերը և լազերային եղանակով դաջվում է կրծքանշանի հերթական համարը /սկսած 1901-ից/: Կրծքանշանը դարձերեսի կողմից ունի պտուտակային ամրակ՝ հագուստին ամրացնելու համար: Կրծքանշանի արտաքին տեսքը պետք է համապատասխանի համաձայնեցված նմուշի արտաքին տեսքին: Թվային տեխնոլոգիաների կիրառմամբ դրոշման եղանակը ապահովում է կրծքանշաների բարձր որակը և ճշգրիտ չափսերը: Ցանկացած երկու կրծքանշանի չափսերի շեղումը պետք է լինի ոչ ավել քան 0.1 մմ: Պատրաստի կրծքանշանի վրա չի թույլատրվում ՝ Պատկերների և գրվածքների աղավաղում: Մակերեսի վրա խազեր, քերծվածքներ, այլ հետքեր: Մատակարարը կրծքանշանների նմուշների եռաչափ (3D) մոդելավորված նկարները և հետո նմուշները պետք է նախապես համաձայնեցնի պատվիրատուի հետ: Տուփի արտաքին չափերը հետևյալն են՝ (բարձրություն X լայնություն X երկարություն) 15X60X60մմ: Պատրաստված է ստվարաթղթից, կրծքանշանի արտաքին եզրագծով հարթակով՝ իր ճշգրիտ դիրքավորման համար: Կրծքանշանի հետ տրվում է վկայական (էսքիզ 13): |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

АТА ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-22/27 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | |
|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | наименование производителя | технические характеристики |
| 14 | | | | |